

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,  
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 120-Ա**

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՛**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 6-ի արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հոկտեմբերի 6-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին:

3) Դրամական հատկացումներ կատարելու մասին:

4) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

5) Գլաձոր բնակավայրում կառուցված գազատարը անհատույց օգտագործման տրամադրելու համար թույլտվություն տալու և Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 111 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

6) Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

7) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 43-Ա որոշման հավելվածում փոփոխություն կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ  
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ  
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ  
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈՆԱ  
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ  
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ  
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ  
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ  
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԿԵ



ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,  
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 121-Լ

ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ  
ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

- Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի 3-րդ եռամսյակի ընթացքի մասին հաղորդումն ընդունել ի գիտություն՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14

Դեմ -0

Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ  
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ  
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ  
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈՆԱ  
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ  
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ  
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ  
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ  
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԵԿՎԱՐ՝



ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եկամտային մաս.

հազ.դրամ

Եկամտատեսակ	Նախատեսված	Կատարողական	Կատ. տոկոս
	/3-րդ եռամսյակ/	/3-րդ եռամսյակ/	
Անշարժ գույքի հարկ	16000	17384.9	108.66
Գույքահարկ փոխադրամիջոցներից	58000	58478.4	100.82
Տեղական տուրքեր	4900	5160.7	105.32
Ընդամենը գույքի վարձակալությունից եկամուտներ	6000	6139.4	102.32
Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	386081.9	386081.9	100.00
Այլ դոտացիաներ	0	0	0.00
տեղական վճար	4000	8112.2	202.81
տեղական վճ.՝ ծնողական մուծում	10000	13081.2	130.81
տեղական վճ.՝ աղբահանություն	17000	17029.8	100.18
Պետական տուրք ՔԿԱԳ	1810	1810	100.00
Պետական տուրք նոտար	3197.1	3197.1	100.00
Այլ եկամուտներ	600	4138	689.67
Ընդամենը	206980.6	214218.7	103.50
<b>Ծախսային մաս</b>	<b>Նախատեսված</b>	<b>Կատարողական</b>	<b>Կատ. տոկոս</b>
	/3-րդ եռամսյակ/	3-րդ եռամսյակ/	տոկոս
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ	119484.6	119484.6	100
Պարզևատրումներ	4831.5	4831.5	100
Էներգետիկ ծառայություններ	15243.8	15243.8	100
Կոմունալ ծառայություններ	132.9	132.9	100
Կապի ծառայություններ	1051.1	1051.1	100
Գործողումների և շրջագայությունների ծախսեր	1640.9	1640.9	100
Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում	3995.6	3995.6	100
Դրամաշնորհներ	13901.3	13901.3	100
Սուբսիդիաներ	243468.8	243468.8	100
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	2100	2100	100
Այլ ծախսեր	17410	17410	100
Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում, շինարարություն(գազ)	204813	204813	100
Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ	9932	9932	100
Նյութեր	0	0	0

Համայնքի ղեկավար

Դավիթ Հարությունյան



*(Handwritten signature in blue ink)*



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,  
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ  
06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 122-Ա**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կազմի 43-րդ կետը.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի՝

1) 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից՝ տարեցների միջազգային օրվա կապակցությամբ, 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել Վերնաշեն բնակավայրի 103-ամյա բնակիչ Գեղեցիկ Սարգիսի Բաբայանին:

2) 02.05.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ հատկացնել սեպտեմբերի 13-14-ին ադրբեջանական լայնածավալ ագրեսիայի արդյունքում զոհված զինծառայող Ձորիկ Կորյունի Մարգարյանի ընտանիքին /Գլածոր բնակավայր/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -14  
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ  
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ

Դեմ -0      Ձեռնպահ -0

ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ  
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈՆԱ  
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ  
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ  
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ  
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ  
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿՎԱՐ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,  
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 123-Ն**

**ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ  
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 4-ի թիվ 23-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) գործառնական դասակարգման 04.9.1 ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 8411 /հողի իրացումից մուտքեր/ հոդվածին ավելացնել 7 959 000 (յոթ միլիոն ինը հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ.

2) համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից պակասեցնել 700 000 (յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը հատկացնել ֆոնդային բյուջե և 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը վարչական բյուջե.

3) ֆոնդային բյուջեում ավելացված 8 409 000 (ութե միլիոն չորս հարյուր ինը հազար) ՀՀ դրամ գումարը նպատակաուղղել գործառնական դասակարգման 08.2.7 /հուշարձանների վերանորոգում և պահպանում/ ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 5112 /շենքերի և շինությունների կառուցում/ հոդվածին՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի Արցախյան 44-

օրյա պատերազմում նահատակված հայորդիների, Դ. Դեմիրճյանի անվան զբոսայգում գտնվող Արցախյան առաջին պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիրներին կից տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով.

4) վարչական բյուջեում ավելացված 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը նպատակուղղել՝

ա. գործառնական դասակարգման 10.7.1 /սոցիալական հատուկ արտոնություններ/ ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4726 /հուղարկավորության նպաստներ բյուջեից/ հոդվածին 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ սեպտեմբերի 13-14-ին ադրբեջանական լայնածավալ ագրեսիայի արդյունքում զոհված զինծառայողի հուղարկավորության ծախսերի համար,

բ. 1.6.1 /ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ/ ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 4637 /ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին/ հոդվածին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ համայնքային սեփականություն հանդիսացող GAZ A64R45 մակնիշի ուղևորատար միկրոավտոբուսի շահագործման համար վառելիքի ձեռքբերման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:


Կողմ -14  
ԱՎԱԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ  
ԲԱՅԱԹՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ  
ՄԱՆԱՍԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ  
ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍՈՆԱ  
ՄԿՐՏՉՅԱՆ ԹԱՄԱՐԱ  
ՄՈՎՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ  
ՆԱԶԱՐՅԱՆ ԵՂԻՇԵ  
ՆԵՐՍԻՍՅԱՆ ՄՈՒՇԵՂ  
ՍԱՐԳՍՅԱՆ ԳՐԻԳՈՐ  
ՍԱՐԳՍՅԱՆ ԷՄԻԼ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՄԻԿ  
ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱՀԵ

Դեմ -0      Ձեռնպահ -0

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**



**ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք  
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգնաձոր, +374 281 22020,28125183,  
yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**06 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 124-Ա**

**ԳԼԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐԸ  
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ  
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 111  
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների.

**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Բնական գազի մատակարարման ծառայությունների մատուցման, արդյունավետ շահագործման և պահպանման նպատակով՝ 2020 թվականին Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի թվով 6 փողոցներում (21-րդ փողոց 30/1, 25-րդ փողոց 31/1, 26-րդ փողոց 1/1, 32-րդ փողոց 6/1, 32-րդ փողոց 46/1, 33-րդ փողոց 4-րդ փակուղի 1/1) կառուցված գազատարն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Գազարոմ Արմենիա» ՓԲԸ-ի Վայոց ձորի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղին (Վայոց ձորի ԳԳՄ):

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Վայոց ձորի ԳԳՄ-ի հետ կնքելու անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Ուժը կորցրած ճանաչել Գլաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 19-ի՝ «Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրում 2020 թվականին

